



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 28

— ԶԵ ՇԱՐԱԹ —

9 ՅՈՒԼԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձիալ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեղիկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին:

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՋԵՆԻԹՐ՝ քէ՝ Կ. Պոլիս, եւ քէ՝ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՋԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի ճառսկսի քիւ 23



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՎԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ.

(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնէլի հտեւը.

(2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համալ.

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՒՏԱՐ

Զարչը Պօյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր զաւառներու բոլոր ֆազաններու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕՔԻԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԻՄՆՈՒՄԻ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵՆՏՐՈՆ ԶԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

ՀԻՐԵԶԻ ԶԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային
կանքի վրայ:
ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շողեհաւի՝ եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան զբաղմունքն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եան է Պոլիս, Ալեքանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ինչզաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ս 28

ՇԱԲԱԹ

9 Յուլիս 1905

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսանող մանկուքիւնը մեր եւ օտար վարժարաններուն մէջ . (Խմբագրական) . — Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ : Խռովներ (Ոսանաւոր) . — ԻՍԿՈՒՀԻ ԴՐԻԳՈՐԵԱՆ : Թափառումներ (Մօսա) . — Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ : Գրական մօակներ (Արսաեկս Յարուքիւնեան) . — ԵՐ. ՃԻԻՀԵՐԵԱՆ : Կրթական հանդեսներ . — ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ : Ալիոլաբանախօսական համականի . — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ : Իզմիրեանց հանդէսը եւ Լուրերու բաժին . — ԽՄԲ. : Թրքուումներ (Ոսանաւոր) . — ՀՐ. ՄՈՄՃԵԱՆ : Կապիկներու աշխարհին մէջ . — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՍ :

ՈՒՍԱՆՈՂ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՒ ՕՏԱՐ ՎԱՐՓԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Գ.

Անցեալ շաբթու կ'ըսէի թէ մեր վարժարաններու անյաջողութեան բո՛ւն պատճառը ուղղամիտ և կարող ուսուցչութեան մը չգոյութեանը չէ որ կը վերագրեմ, որովհետեւ անկեղծ ըլլալու համար պէտք է ըսեմ թէ՝ ունինք մեծկալ թիւ մը փորձառութիւն, արժանիք և կրթական գործին ճշմարիտ գիտակցութիւնը ունեցող երկու սեռէ ուսուցիչներ, ինչպէս որ ունինք ճշմարտապէս մեղքըցուելիք և լոկ ապրեցուելու համար պաշտօնի անցում խումբ մը անճարակներ, որոնք կրնային շատ մը ուրիշ բաներ ըլլալ բայց ո՛չ ուսուցիչ։ Ուստի, ընդունելով հանգերձ որ իւրաքանչիւր համար բերուած այս ողորմելիներն ալ իրենց յատուկ դերը ունին կրթական մեքենային ծանր ու դանդաղ շարժումին մէջ՝ հակառակելով միւս աւելի՛ կարողներուն գնահատելի ջանքերը, կայ նաև ուրիշ արգելիչ և նշանակելի պարագայ մը, որուն բնա՛ւ կարելորութիւն չէ տրուած, դժբաղդաբար, և ոչ ալ պէտք եղածին պէս գիտուած՝ հակառակ իր մէջ բերած մէկէ աւելի յոռի հետեւանքներուն :

Ու այդ արդելիչ պարագան, այդ չէ տեսնուած պատճառը, մի՛ զարմանաք երբ ըսեմ թէ՛ մենք խակ ենք. մենք, մեծերս, ծնողք ու պարագաներ՝ ուսանող այդ մատաղ մանկութեան:

Թէ ինչպէ՛ս, պարզենք:

Այսօր, պէտք է ընդունինք սա անուրանալի ճշմարտութիւնը թէ՛ մենք, ամենքնիւ ալ, մէկ մէկ խիստ քննադատներ, վաշխառուի մը չափ անյագ պահանջկոտներ, և՛ քիչ մըն ալ առաջ երթալով՝ տիեզերքի է՛ն ուղղամիտ մարդիկը կը դառնանք, երբ խնդիրը մեր դպրոցին, չըսելու համար մեր բոլոր տոհմային հաստատութիւններուն, բոլորովին կը դառնայ. ու ասիկա այն միակ մատմուսնով թէ՛ այն բանը որ մերն է, ամենքնիւ ալ հաւատարապէս իրաւունք ունինք խառնուելու: Ուստի, ամէն անգամ որ առիթը ներկայանայ, մեծ ու պզտիկ, կին ու էրիկմարդ, արհեստաւոր ու վաճառական անմիջապէս կը սոթաւորուինք անխափ դատաւիտելու, բամբասելու և վարկաբեկ ընելու ենթակայ հաստատութիւնը՝ սկսած իր տնտեսէն մինչև անօրէնն ու հոգատար մարմինը: Հետեւաբար, յաւալի է ըսել որ երբ անդին, օտար վարժարաններուն մէջ, կրթական մարմինները ուղղեցոյց ունենալով իրենց՝ մի միայն դպրոցական օրէնք, կը գործեն լռիկ միջիկ, կը քալեն օրինակելի կարգապահութիւնով և ամէն նոր օրի, նոր արդիւնք առաջ կը բերեն, ասդին, մեր կրթական գործիչները, միշտ ենթակայ անոր ասոր քմահաճոյքին, միշտ դատապարտուած անտեղի քաջքնութեամբ, և վերջապէս միշտ նշաւակ անհարկի վիճաբանութիւններու՝ չեն կրնար տալ, հակառակ իրենց ունեցած prestigeին, այն ուղղութիւնը՝ զոր օգտակար կը նկատեն մանուկներու անհրաժեշտօրէն լաւագոյն դաստիարակութեան: Ու, այսպէս, կը պատահի շատ անգամ, որ է՛ն խղճամիտ ուսուցիչը, է՛ն համբերատար ու լայնախոհ պաշտօնեան զղուած, նողկացած այս ամէնօրեայ անհատնում դիտողութիւններէն, վհատի իր անձնուէր զգացումներուն մէջ, պաղի, թուլնայ իր արդիւնաբեր եռանդին մէջ և ակամայ տանի, ձգէ իր խրնամքին յանձնուած մանկութիւնը հոն, ուր ալ կը դադրի իր խղճին խայթումը՝ լուացած ըլլալով իր ձեռքերը պատասխանատուութեան կոնքին մէջ: Հոս, դա՛ւ քաջաբար մը տալու համար թէ՛ մեզմէ շատեր ինչպէ՛ս կը մտնեն տակաւին վարժարանը, և թէ ի՞նչ կերպ վերաբերում ունին անոր օրէնքին ու կարգապահութեան հանգէպ, մէկ երկու օրինակ բերենք:

Վարժարանի մը տեսչութիւնը, օրհնեալ փայտի դրութեան դպրոցէն իսպառ վտարուելէն վերջը, որոշած էր իբր պատիժ առատ դիր գրելու ենթարկել յանցաւոր տղաքները: Ուստի օր մը, անուղղայ տղու մը պատիժ տրուած էր իրիկուան արձակուրդէն վերջը, դպրոց մնալ միջոց մը և դիր գրել 200 տող:

Տղուն հայրը սակայն, որ այդ իրիկուն եկեղեցի եկած էր, արձակուածներուն մէջ երբ իրենը չի տեսնելով՝ Դաստիարակ-Ուսուցչին կը հարցնէ թէ՛ ո՛ւր է ան, այս վերջինը, կատարելապէս վստայ թէ ո՛ր աստիճան պիտի ուրախացընէ դիմացինը՝ տրուած պատիժին ձեւին մէջ և մանաւանդ կարծելով թէ՛ չափազանց գոհ պիտի մնայ ան՝ իր զաւակին բարեկրթութեան համար ձեռք առնուած խնամքներէն, զուարթ դէմքով մը ու խնդում երեսով կ'ըսէ:

— Անիկա պատժուած է այս իրիկուն և կէս ժամ ետքը պիտի արձակուի։ Բայց մեր միամիտ մարդուկը, որ թաղին մէջ քիչ շատ ալ զարգացածներէն ճանչցուած է, առանց անգամ մըն ալ բերանը բանալու անմիջապէս վեր կենէ դպրոցին սանդուխներէն և ուղղակի տղուն դռնալով՝ կըսէ։

— Հայտէ ծօ՛, հետս եկո՛ւր նայիմ, աս ալ նո՞ր ելաւ։

Ու տղան առջեւը ձգած կառնէ կը տանի՝ համակերպելէ զատ ուրիշ միջոց չունեցող խեղճ ուսուցչին ապշած, զարմացած վիճակին մէջ։


Ուրիշ օրինակ մը։

Ուսուցիչ մը, տեսներով որ օր մը աշակերտներէն մէկը հակառակ եղած կրկնակի պատուէրներուն, աղտոտ-կեղտոտ ու ձեռքը բերանը մուրտս վիճակի մէջ եկած է վարժարան և այս կերպով ոչ միայն դէմ կը գործէ դպրոցին առողջապահիկ կանոններուն, այլ և կ'սպառնայ իր տարեկից ընկերներուն մաքրութեան, տուն կը զրկէ զայն անմիջապէս՝ մաքրուած վիճակի մէջ դռնալու համար։ Քիչ մը ետքը սակայն, այն մի և նոյն պատանին կուգայ հետը բերած իր պարագաներէն մէկը, որ փոխանակ շնորհակալութեան՝ — ու ասիկա դռնէ իրենց այդ պզտիկին սիրուն — կը պողայ, կը կանչէ և մինչև անգամ կ'սպառնայ վռնտել տալ ուսուցիչը՝ եթէ անգամ մըն ալ համարձակի տուն զրկել տըղան ասանկի պօշ քանի մը հաւաք։

Ու հիմա, երբ մեր շատ մը թաղային վարժարաններուն մէջ կը տեսնենք անվերջ, անհատնում շարքը, այս առօրեայ պատահական տափակութիւններուն, ողորմիս հաննչիս չիգա՞ր հին օրերու այն բարի ծնողքներուն, որոնք՝ հակառակ իրենք դպրոցէ հասկցողներ չըլլալուն, կղզային գիտէին դպրոցէն ներս չիխառնուելու պէտքը, կը ճանչնային, կը յարգէին դպրոցին օրէնքն ու վարժապետը և ամէն անգամ որ նորեկ մը բերէին հոն, տեսակ մը երկիւղածութիւնով կարտասանէին հետեւեալ բանաձեւը, որ իր լակոնական պարզութեան մէջ շատ աւելի պերճախօս էր՝ քան հիմակուան անվերջ ըսի-ըսաւները և մինչև թերութեամբ մէջ արձագանգուած տեսակ մը անիմաստ փոխասացութիւնը։

— Մարմինը ձեզի, ոսկորը ինձի։ վարժապետ, մարդ ըրէ զաւակս։

Յ. Մ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ



Ք Ո Ո Վ Ք Ն Ն Ք

Լուսինն ջրմոյն ցոլփերն կ'իյնան ծովուն մէջ
Բեկբեկելով ալեաց վրայ ծրփծրփուն,
Ու բոյր գիրգ հեռուէն կուգայ մեզ անվերջ
Հետ զեփիւռին զովութիւնովն երեւուն։

Մովը խաղաղ ծրփանցներով կը խայտայ,
Սրտիս պէս վեհ, հոգեբուն պէս ոգեվառ,
Ու փոքորիկ մը կըսպառնայ անխրնայ,
Մրտիս պէս խոնգ, խոկումներու պէս յամառ։

Կը բեկբեկի ու կը ջրփնի հեռուէն ան,
Տրմոյն, աղօս նշոյլները ցանկելով,
Մինչ իմ յոյգեսս, գրգիռներս ընդունայն
Ձիս կը վառեն ու կը լեցուին խրոսովով։

Եւ կը յուզուի՛մ՝ յիշելով մեր գգուանքն հին,
Ալեաց նրման խայտ մը կ'եռայ սրտիս մէջ,
Մինչ կը մարի յետին ցոլփերն լուսինին,
Ես դեռ կ'այլիմ հին հրդեհով մը անեղ։

ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄՇԱԿՆԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱԾԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Թրքահայ քերթողներուն ամենէն նշանաւորներէն է Արտաշէս Յարութիւնեան ու իրեն յատուկ փայլուն տեղ մը ունի մեր բանաստեղծական հորիզոնին վրայ :

Երբ էն նշանաւորներէն է կ'ըսեմ, ասիկա պզտիկ պատիւ մը չէ կարծեմ դաւաճողի գրողի մը համար, քանի որ ա'յնչափ հազուադէպ բան մըն է այդ ապրանքը դաւաճողներու մէջ :

Գրուածք մը այն ատեն միայն արժանիք ունի երբ յայտնուած գաղափարները բոլորովին նոր ու original են, ու անանկ ձեւով մը արտայայտուած որ մինչև այն ատեն գործածուած չըլլան, մէկ խօսքով, գրական արտայայտութիւն մը պէտք է ցոլացնէ գրողին գաղափարի և դարգացումի ինքնութիւնը, գրուածքը հայելի մը պէտք է ըլլայ որուն մէջէն յստակօրէն տեսնուի գրողը : Այս տեսակէտով Յարութիւնեան յաջողած մը կրնայ սեպուիլ : Իր գրադէտ մեծ դեր մը խաղացած է գրական evolutionին մէջ իր բարեշնչող գաղափարներով : Ու երբ աչքի առջև ունենանք ուս վերջին քանի մը տարուան մէջ յարուցած լէճերը, կրնանք ըսել թէ գրական սոցալարի մարդ մը կայ Յարութիւնեանի մէջ թաքցած, որ մերթ ընդ մերթ ի յայտ կուգայ : Իր խիզախ յարձակումները շարժաթաթերթի մը խմբագրին վրայ, և այն սուր կամիթները զոր մերթ կը սիրէ տալ Փանոսեանին ամենէն կարկառուն ապացոյցներն են առ այդ :

Գրական խիզախ յոգեւածներու հեղինակըն ալ եղած է յաճախ, ինչպէս 4-5 տարի առաջ «Վաղուան գրականութեան» հարցը զոր արծարծեց նախ Բիւրակցի և Վերջը Մասիսի մէջ, իր ատենին բառական խօսեցնել տուաւ :

Գաւառացի մը ըլլալը աւելի ուշագրաւ բան մը կուտայ իրեն, ու իր այդ հանգամանքին համար աւելի բարձր արժանիքով մը կը ներկայանայ աչքին առջև, որովհետեւ դիւրին բան մը չէ բանաստեղծ-գրադէտ մը ըլլալ, ու համաւաւորներէն ալ, Մալկարայի անձուկ հորիզոնին մէջ :

Լրուած Բնարին տաղանդաւոր հեղինակը մեզուի մը նման մէկ ծաղիկի վրայ չի յածիր միայն, իր գրիչը մերթ lirioue և մերթ mistique բանաստեղծութեանց յարած է : Իր սիրերգները ջղուտ և հմայքոտ ոճ մը ունին սիրահատուով գերազոյն անձկութիւններու մէջ գրուած կարծես, ջերմ և տաքարիւն մարդու մը անսխեղեթ խօսքերը, որոնց մէջ անկեղծութեան շեշտ մը կայ : —

. . . Զի ո՛վ գիտէ որ մ'աւաղ
Այս խոստովներս ես մոռնամ,
Ու իմ լանջիմ քակ խաղաղ,
Այս կըրակներ ստոնանան :

Ուրիշ տեղ մը . —

Այդ յայրաս շարժումն ինձի մի քոյլ քար
Ու դուն հոս կեցիր միտ անհրապի,
Մինչեւ ա՛լ անոյս ու անմրիխար՝
Ըսպառի հոգիս, մամ ըլլայ, հալի՛ :

Նեղ տողերու մէջ դժացումներու շղթայ մը սեղմել Յարութիւնեանի արժանիքներէն մէկն է : Ոմանք իրենց դժացումները տաղաչափեալ տողերով բացատրելու համար քերականական անհեթեթութիւններու աջակցութեան կը կարօտին կամ գրաբար ձեւեր եւն. կը գործածեն ակամայ, սովորութիւններ, որոնք իրենց տեղը ա՛լ պէտք չէ որ ունենան կարող բանաստեղծին գրչին տակ : Յարութիւնեանի տաղաչափեալ չեզոք սահունութիւն մը և բաւերու մարգարտաշար տաղանցում մը ունի, առանց կիսատ գաղափարներ կամ երկդիմի իմաստներ պարունակելու : Այնպէս որ եթէ յանգաւոր չըլլային յաջող արձակ մը պիտի ըլլային . —

Ամպեր քե անոր երկիրն ալ երբաք
Համբոյրեա կրակ մ'ու բոց մ'աչեբեքս՝
Կուրծքիս խորեբեքն հառաչանք մը քաք
Ու կայծ մ'ալ առե՛ք, քաքք իմ սեբեքս :

Աչեբեքս ցոլք ձեր փայլակներուն
Բոցք շապիկին մէջ ծրարեցեք,
Ու հառաչներեք վանկ մը մոլորուն
Ձեր որոնումի ծոցին մէջ դրեք :

Ասոնցմէ գառ արտակարգ կարողութիւն մը ունի իրերը պատկերացնելու, րնութեան տեսարանները նկարելու գործին մէջ : Իր

արտագրութիւններուն մէջ քիչ տեղ մը չը գրաւեր այս արժանիքով օժտուած տողերը, որոնց մէջը երբեմնով չեմ ուղեր բեռնաւորել յօդուածս, սակայն աւելորդ չէ կարծեմ ճաշակ մը տալու համար արտագրել 1899 տարւոյն մէջ գրած Գիշերային երանգներ քերթուածին մէկ տունը. —

Սաղարթներուն ցակ, բերել մի հուրի
Մարմանդին վրայ կը սանի շուս շուս.
Ասուպ մը կ'իյնայ մեղմ ու վիթանուս
Ու կապոյսին մէջ պահ մը կ'երկարի:

Եթէ բանաստեղծ մը չըլլար, գրաւ կը գնեմ որ նկարիչ մը պիտի ըլլար մեր Մակարացի Արտաշէսը:

Սակայն իր արժանիքը միայն ասոնց մէջ չկայանար: Բանաստեղծութեան մէկ անտեսուած ճիւղը, գուցէ առաջին անգամ ըլլալով ինք կը մշակէ, գաւառական բանաստեղծութիւնը ըսել կ'ուզեմ, սակայն դժբաղդաբար հետեւորդ չունեցաւ: Դիւղի տեսարանները և գաւառական աւանդութիւնները գրականօրէն յղկել ու անոնց հագուեցնել բանաստեղծութեան տարազը, առաջին անգամ ինք փորձեց: Կաթնաղբիւրը, Հողագործները, Ժայռերը, Յոպոպ քոչուներ ևլն. յաջող դրուագներ են գաւառական բանաստեղծութենէն: Իր քերթուածներուն մէջ գաւառացիի հով մը, գիւղական ներշնչումներ կը թրթուան, և ասոնք ալ արդարեւ հաճելի պէս պիտի թուին մը կը գնեն մեր յաւէտ սիրային անջիղ, տափակ ոտանաւորներուն մէջ, որոնք ա'յնչափ կը վիտանայսօր առաւել քան երբեք մեր պարբերական մամուլին մէջ: Շատ տխուր է մտածել թէ տակաւ կը փթանան մեր գրական ճաշակները: Առ ի չգոյ է լաւագոյններուն, ինքզինքնին էն աւելի գրական կլլեցնել ուղող թերթերն անգամ իրենց էջերը բացած են սիրային պաղ, պարզ ոտանաւորներու առջև, որով ընթերցողները կորսնցուցած են վսեմը նսեմէն զանազանելու կարողութիւնը ու սկսած են հաւնիլ հանդիպածին:

Վերջերս շատեր բանաստեղծի անուն չինեցին հետեւակ բանաստեղծութիւններով, հազար անգամներ գրուած, կարգացուած ոտանաւորներու varianteները հրամցնելով: Այս պարագան աւելի կը չեչտուի երբ մարդ Դուրեանի Տաղըր, Սիպլիի Յոլքերը, Յարութիւնեանի Լքուած Բնարը կարգալէ վերջ աչքէ անցնէ հրատարակուած բանաստեղծութիւնները:

ԵՐ. Մ. ՃԻԻՀԵՐԵԱՆ

ՄԵՐ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Դպրոցական տարեշրջանի փակումի այս ամիսներուն, գրեթէ բոլոր վարժարաններն ալ, ըլլան աղգային, ըլլան անհատական, իրենց սահմանին մէջ՝ հանդէսներ սարքեցին և դեռ պիտի սարքեն:

Բայց ուրիշ տարիներու հակառակ, այս տարի մամուլը անոնց նկարագրութիւնովը միայն դոհացաւ, առանց իր կողմէ ուրոյն կարծիք մը յայտնելու:

Մամուլին այս լռութեան պատճառը թերեւս սա ըլլայ թէ, այս տարուան հանդէսներն ալ ուրիշ տարիներու յար և նման են և դուրկ առաւելութենէ մը:

Բայց արդեօք պէտք է լուռ մնալ թերութեանց առջև:

Ոչ անշուշտ: Որովհետեւ որքան յաճախակի մատնանիլ ըլլուի ան անձանձիր, այնքան հաւանականութիւն կայ, եթէ ոչ կատարեալ սրբագրութեան՝ գէթ մասնակի բարեփոխումի մը:

Ուստի մենք ևս պիտի չեչտենք, պիտի մատնանիլ ընենք մեր հանդէսներուն թերի կողմերը, «նայն բարբառոյ յանապատի» չըլլալու յոյսով սակայն:

Ամենէն առաջ աչքի դարնող թերութիւնը հանդիսավայրերուն անյարմարութիւնն է: Անոնք յաճախ կամ անձուկ սրահներ են, կամ նեղ և անծառաղարդ պարտէզներ:

Արդ այսպիսի վայր մը թէ հանդիսականներուն հանգստին տեսակէտով և թէ առողջապահական տեսակէտով անընդունելի է: Ոչ շարժումի ազատութիւն կայ ոչ ալ մաքուր օդի բաւականութիւն:

Ուրիշ թերութիւն մըն ալ հրաւիրեալներու դասակարգութեան և ընդունելութեան կերպերու անկանոն և անհաշիւ ըլլալը:

Եթէ հանդէսին մուտքը տոմսակով է, այն ատեն ինչ հարկ կայ բաղմութիւն ունենալու համար քաղաքավարութեան և կրթութեան երեսը իսկ չտեսնողներու ալ հրաւիրագիր ուղղելու: Իսկ եթէ մուտքը ազատ է, պէտք է պարանով կամ այլ կերպով անջատել ամբողջ բարձր աւտիճանէն:

նաւորութիւններէ, և այլ և այլ մարմիններու ներկայացուցիչներէ, պէտք է այս վերջինները տարբեր անցքէ մը առաջնորդել որոշուած յատկացուած տեղերը:

Շատ մը հանդէսներու մէջ խառնիճաւանջը կը խուժէ յիշեալ անձնաւորութեանց վրայ, և անոնք անհանգիստ կ'ընէ, երբեմն ալ քաղաքավարութեամբ ?? անոնց աթոռները կը յափշտակեն:

Գալով ընդունելութեան կերպերուն, մասնաւորապէս կը շեշտենք թէ, շատ անկատար է և նախնական վիճակի մը մէջ:

Հանդէսին մուտքը կը կենան շատ անգամ կամ երկուսուսարդ գեղգեկներ, և կամ շալվարը քաղաքավար !! Ժամկոչներ, որոնք տոմսակը ստանալէ ետք՝ « կրնաս անցնիլ » մը կը նետեն հրաւիրեալին երեսին, խեղճը թողով որ ինքը իրեն համար ճամբայ բանայ և աթոռ մը ճարէ:

Իսկ աւելորդ կը համարինք խօսիլ ներկաներուն, վարմունքին, կիներու ճիշերուն, կանանց խօսվաւորքին, տղոց հայհոյութեանց, աշակերտներուն տաղտուկին, ճիյօ պիլօին, սոխի սխտորի հոտին, տիրող իրարանցումին, ևլն. ի վրայ, մեր գրչէն աւելի վաղուն գրչի մը « Հանրագիտակ » ի քրոնիկագրին թողով անոնց հատորներ լեցնող նկարագրութիւնը:

Իսկ գալով հանդէսին էական մասին, այսինքն կազմակերպութեանը, շատ . . . (ածական մը չեմ կրնար կոր գտնել որ տամ):

Եւրոպականին վրայ ձեւուած թէև, բայց այնքան ԱՆՃԱՐԱԿ (վերջապէս դտայ) որ մարդ ամէն բանի կրնայ զայն նմանցնել բաց ի դպրոցական հանդէսէ:

Նախ կարգացոյցին երկարութիւնը, որ թէև շատ մը բաներ կը կրէ, բայց իրականին մէջ մեծ բան մը չունի:

Յետոյ համըաւաւոր ճառերը, գրուած ՎԿՍՅԱԿԱՆԱԿԻՐ ուսուցիչներու կողմէ, մաքուրը քաշուած աշակերտին կողմէ, զարգաբերը յօրինուած գեղագրութեան ուսուցիչին կողմէ, և մտիկ չեղած հանդիսականներու կողմէ: (Հարկ կը համարինք հոս բացառութիւն համարիլ այն ճառերը որոնք վարպետ գրչի արդիւնք են):

Անհամ կատակերգութիւնները, վարպետ

տուտուի արտասանութիւնները, տղոց չհասկըցած ֆրանսերէն և գերմաներէն տրամախօսութիւնները, երգերը և ոտանաւորները, վերջապէս աշակերտներու և աշակերտուհիներու կողմէ ներկայացուած հրամցուած ամէն բան անհրապոյր է, նորութիւն չկայ, շիքութիւն քնաւ երբեք:

Ուրիշ աւելի կարեւոր և աչքառու թերութիւն մը կարգացոյցին մէջ, թաղին մատակարարութեան երկարապատում տեղեկագիրը և նոյն վիճակացոյցներուն ընթերցումը:

Սև փողկապով, սև քոսդիւմով թաղական աղա մը, մէկ ձեռքը թուղթի ծրար մը և միւս ձեռքը ջուրի գաւաթ մը, (մէջինը ճերմակ ըլլալէն ջուր կը կարծենք) գոռ շեշտերով, թաղին մատակարարութեան տեղեկագիրը կը կարդայ որ դերասանի մը կրմկրմած դերէն աւելի երկար, աւելի անհամ է, ինչ է եղեր, իրենք, թաղական աղաները պաշտօնի կոչուած ատեններն դպրոցը չգիտեմ որքան զրուշ պարտք ունի եղեր, իսկ հիմա այդ պարտքը նուագեր է, թէ դպրոցը սա չափ աշակերտ, սա չափ ուսուցիչ ունի եղեր, թէ եկեղեցին ամիսը սա չափ զրչի մոմ կ'երթայ եղեր ևլն:

Մեծարգոյ աղաներ, այդ վայրը հանդէս մընէ, և ոչ թէ Տնտեսական Խորհուրդի սըրահը, ամբիւրմ, պրավօ, լաւ մատակարարներ էք եկեղեցին, դպրոցը, բայց ատոնց հաշիւները ոչ թէ հող, այլ պատկանած տեղը ներկայացնէիք:

Իսկ տղոց վիճակացոյցներուն գալով՝ թեկ թեկ պեխերով շիք միւսիւններ, կոկոզավիզ, ծայրէն տանքիլ մը կախուած տետրակ մը ձեռքերին բեմին վրայ կը տնկուին և կը սկսին կարդալ, ինչ . . . Մարկոս Կիրակոսեան, միջին բարձրագոյն, վարք՝ տասը կրօնք՝ տասը, հայերէն աշխարհարար տասը, հայ. գրաբար՝ տասը, հայ. երկուքին խառնուրդը տասը. . . տասը տասը, դուք եւս, սիրելի ուսուցիչներ կարճ կապեցէք, որովհետեւ մտիկ ընողներուն ալ բացուեցաւ գրչի խուն քասը:

ԳՐ. ՀԱՄԵՐԻԿԱՆ

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ

Մ Օ Տ Ս

Բըքի Շանի հայ-լայֆ զբոսարան-պարտէ-
զը վայելելէս վերջ, անշուշտ չէք սպասեր
որ յաջորդ կիրակին Եէնի-Գարուի պօստան-
ները սլըքարկամ . . . : Ուստի՝ որպէս զի
աստիճանաւոր ըլլան քափառուսներս, պա-
տիւ ունիմ ձեզ նկարագրելու Գատը-գիւղի
Մօտան, որ ինքնին բըքի Բեռա անունը կը
կրէ, այսօր շնորհիւ տեղացի աղնուագոյն
մօնտին, որ գիտէ ապրիլ՝ ինչպէս որ կը
պահանջէ 20րդ դարը :

Մօտա ըսուած զբոսավայրը լեզու մընէ
երկարած բուն Գատը-գիւղէն դէպ ի Մար-
մարա, ծառաստանով մը շքաւորուած, ուր
կը գիմէ գիւղացին չաբթուան պարզ օրերու
երեկոյները իր ֆիզիքականը կազդուրելու,
իսկ կիրակիները, իր նիւթականը ցուցադ-
րելու :

Հոս կարելի չէ մէկ ակնարկով որոշել և
զանազանել Եւրոպացի կիներ Հայ կնոջմէն,
այնքան խառն ու թուալէթի տեսակէտով
նման են իրարու, բայց երբ մարդ իմ աչ-
քովս նայիւ և որոշել ուզէ, այն աստիճան
կնիկը իր գոյնը դուրս կ'ուտայ և լուս-
պերճախօսութեամբ մը ի հանդէս կածէ իր
խսկութիւնը :

Գատը-գիւղի Մօտան վայելելու համար
երբ մարդ փորձուի և կամ ուզէ հոն երթալ,
պայման առաջին, պէտք է ծովի ճամբով
ընտրէ քոզի պէպէք չըլլալու համար :

Գատը-գիւղցին, այսինքն բուն միջուկը,
նուշը, ժամը տասն և մէկին փողոց կ'իյ-
նայ մօտաի համար, մինչև որ չի համոզ-
ուի թէ ըրած թուալէթը մէկ հատիկ պիտի
երեւայ բոլոր ներկայներուն մէջ, և ինչ
Հա-
ւատացէք թէ ամէնքն ալ այս գաղափարով
կը հագուին կը շքուին, և արդիւնքը սա
կըլլայ որ, այդ զբոսավայրը գտնուողները՝
առանց բացառութեան կոկիկ, մաքուր և
ճոխ հագուած կըլլան, գէթ ինծի պէս այցե-
լուի մը աչքին դիմացը :

Կիրակի իրիկուն էր երբ Մարմարայի կա-
պոյտ ջուրերուն վրայէն նաւակը, որուն
մէջ հինգ զրուշնոց ճախայով մը բազմած

էի՝ բազմաց աչքին առջև, եկաւ մօտեցաւ
Մօտային, որ իր բարձրագիւր հողվը,
վարէն ճիշդ Բառէի վաճառատունը կը յի-
շեցնէր, այնքան գլխարկներ շարուած էին
իրարու մօտ իրարու դէմ :

Նաւամատոյցէն վեր թէև չատ կարճ,
սակայն մարդ նապաստակ մը ըլլալու է,
որպէս զի առանց ո'ւ է ճիշդի հասնի ողորկ
դետինը, և սակայն ելայ թափառաշրջիկի
պաշտօնիս բերմամբ, և պահ մը կարծեցի որ
բոլոր նստողները զիս կը մատնանշէին «նա՛,
թափառումներու հեղինակը» ըսելով ական-
ջէ ականջ :

Հաւատացէ՛ք, կեանքիս մէջ էն ջիղե-
րուս դպչած բանը բազմութեան մէջէն անց-
նիլս է, երբ աչքիս պոչովը կը տեսնեմ թէ
բոլոր նստողները, պօթերուս ծայրերու մա-
շուկէն, մինչև գտակիս ծոպին ծարիկը տա-
տանող շիւղը կը դիտեն հետաքրքիր նայ-
ուածքներով :

Մօտայի մօտան այնպէս կը պահանջէ որ,
այցելու մը, քաղինօին մէջ սեղան մը գրա-
ւելէ առաջ անգամ մը վեր, անգամ մ'ալ
վար աքք տը բռեղանս մը ընէ : Ես ալ նոյնը
ըրի : Գաւաղանս օտքսրոի մը մայքսրօին
պէս ա քիմքօ ճօճելով, և քալուածքիս ալ
թեթե ճօճումներ տալով անցայ այդ կանա-
ցի քօռիտօռէն և խերէս, փոխանակ զուար-
ճանալով կատարելու պոռոյտս, հիւանդի
հառուայ եախքսի վաղցընող սպասաւորի մը
պէս անցայ հոտկէ քրտինքներու մէջ թաթ-
խելով մարմինս :

Արեւը մօրը գիրկն է հիմա, ինչպէս պըզ-
տիկ պէպէքներն ալ իրենց աղուոր բառա-
մանաներուն դիրկը : Բոլոր սեղանները դը-
րաւուած են, զբօսանքի սէրէն աւելի ան-
աս դիտելու համար նստող ընտանիքներով :
Ես մինչև հիմա կը կարծէի թէ հետաքրք-
րութիւնը միայն հայու կնկան տրուած է,
մինչդեռ կիրակիէն ի վեր համոզուած եմ թէ
Եւրոպացի ուհիները մերիններուն քար հա-
նելու չափ յառաջացած են և տիբլօմ :

Դիտեցէք, երբ կիները կամ օրիորդները
անուշ տեսնալ կուզէք, սպասեցէք որ ա-
րեւը իր գլուխը ծռէ հոգիզոնին վրայ : Չեմ
կրնար պատմել այն քնքոյ պատկերը, զոր
վայելեցի այդ կիրակին, ժամը տասներկու-
քին մօտ, երբ դացի ես ալ իմ կարգին ա-

Թող մը գրաւել երկսեռ բազմութեան մէջ :
Եւ որովհետեւ գաղափար ունէի Գատը-
գիւղցիներու ճաշակին վրայ , ըսեմ թէ ինչ
հագած էի այդ օրը :

Ճերմակ ունեւ տափառ մը, դեղին խազ
այադի պօթեր, պիտո ֆօնտե փաքէթ, և ժիւէ
բաց կապոյտ շապիկ , ճերմակ քաւաթ ,
բան մը՝ որ պակաս ըրած էի , ան ալ քու-
լոնպաճիներու պէս տափառիս ծարերը վեր
չէի դարձուցած , բան մը՝ որ անհրաժեշտ է
մօտայի բռնաւորին համար :

Հոստելի կառասնները շատ անօթի չեն ,
բազմաթիւ Բերայիններուն : Նստելէս
մինչեւ ելլալուս մօտ գրեթէ $\frac{3}{4}$ ժամ քովս
մարդ չի մօտցաւ հարցնելու թէ, մարդ ես,
անասուն ես, հասուն ես, ինչ ես, և որով-
հետեւ գրաւած սեղանիս վրայ գարեջուրի
գաւաթ մը կը կենար, թերեւս ինծի վե-
րագրեցին ու չի մօտեցան . . . առ այժմ իմ
բազմէս :

Չարմանալի դիտողութիւն մը ընեմ մը-
տիկ ըրէք : Կարգաւ նստողները , այնքան
ան ու աս դիտելու զբաղած են , որ բնաւ
չի տեսայ , չի լսեցի ընտանիք մը որ խօս-
ւըռտէին իրարու հետ, այլ աչք, ամէն կողմ
աչք , այլ ոչ աչք-իքի . . . :

Այս տարուան կանացի ուխտը՝ որ է ճեր-
մակ հագուստը , ճշդովին կատարուած էր
այդ կիրակին , ինչպէս անցնող և դալիքնե-
րուն մէջ : Բոլորն ալ կարծես մահճակալնե-
րէն ելած , գիշերնոցները՝ կոնակնին կանց-
նէին կը դառնային մօտէս , մինչ ես էրիկ-
մարդ ըլլալովս հանդերձ , դիտելին տակը
կ'անցնէի . . . ամօթէս :

Հապա քաղուածքնին , կոտորուելնին ,
նայուածքնին . . . կրնամ ըսել օբեռայի
աքքոփները , և կամ քեաքոք վառիքի
պալիքները չունին այդ ճկունութիւնը :

Ինչ և է , ինծի չիմար կարգի կանոնի
բերել զիրենք , քանի որ մօտերնուն քալող
ամուսիննին և կամ եղբայրնին սիրով կը
տանին այդ թեթեւութիւնները , ալ ես ուր
կը մնամ . . . :

Երեք քառորդ ժամ որ հող անցուցի ,
խսիր աթոռին վրայ , երբեք չեղաւ որ
թափիթփած կին մը , կամ աղքատ քաւաթէ
մը նշմարէի այդքան հոծ բազմութեան մէջ ,
և չիտակը ըսելու համար , հոս գրաւորապէս

կը գովեմ Գատը-գիւղցին , իր մաքրութեան,
կոկիկութեան և տիսիքիքին համար :

ԲԱՅՅ . . . : Ներկեցէք հոս անթուրա-
ւանթէղ մը ընեմ : Մօտա նստող հայ ըն-
տանիք մը , որ ճանչնալու պատիւը չունե-
ցայ բարեբաղդաբար , ամբողջ գաղափարս
վեր ի վայր չըջեց կրնամ ըսել , և կարծես
աչքերուս տեսած անուշ պատկերները սրը-
բեց , ջրեց . . . :

Ինչ կողմէք որ տեսնամ կամ լսեմ , հոն՝
ուր հայ-լայն բազմութիւն մը իր էն չիք
պատկերը կը բերէր ցուցադրել . . . Ինչ , ե-
րեւակայեցէք , և գրաւ կը զննեմ որ չպիտի
կրնաք գտնել այն սիրտ խառնուրդ պատ-
կերը , զոր գծեցին այդ չըլլալիքները :

— Հայտէ , բէշդ վեր առ տէ սուճուխը
տուր քի չարթէ , նայէ կառասնը անդին
դառցաւ :

— Մայրիկ խըյարն ալ հանեմ . . .

— Չէ ծօ' , անիկայ հոտով է , կըլլայ քի
ֆառլին կ'երթան . . .

— Չախուդ տուր Օվրէստ , մասային
տակը ծռէ քի չի տեսնան . . .

— Քա' զօւրս ինչ էքի երկու սառտէլային
պօլին երեք խուռուշ տամ , իշտէ տունէն
կը պերեմ , կըլլայ կ'երթայ . . . :

Եւ իրօք , իբր թէ ծանր հագուած տի-
կինը բէշին տակէն ի հանդէս անեց պատ-
կառելի երչիկի կտորը , զոր միւսիւ Օվրէստ
սեղանին տակ կտրելով սկսաւ բաժնել ներ-
կաներուն , որ թիւով տասնէն աւելի էին :
Գանեցայ :

Ալ կարելի չեղաւ ինձ նստիլ հող , այդ
գունիկ վայրը , և հազիւ թէ կը պատրաստ-
ուէի մեկնիլ , կառասնը մօտենալով ,

— Պիր պիռա տահա . . .

— Նասըլ պիռա . . . քիմ իշմիշ . . .

— Իշտէ նա ծանիմու պիր կէթիրտիմ . . .

— Բիմէ . . .

— Սի'զ . . .

— Պէն . . .

— Սիզ , էվէթ . . .

— Պանա . . .

— Իշտէ դատէք . . .

— Պէն իշտիմ . . .

— Եա' քիմ իցմիս . . . էլա բանայիա-
մու . . .

— Պէն կէլտիմ պուրտայրտը գատէք . . .

Տաքութիւնը թիֆոյնին հասած էր ալ վրաս, երբ կը տեսնէի թէ բոլոր ներկաները քիթերնուն տակէն խնդալով ինծի կը նայէին, այնպէս չիտակ ու պիշ պիշ, որ կարծես օպ- ժեքքիթին առջև գտնուէին :

Ճարը չի կար, պէտք էր վճարել բալի- քառեային, ապա թէ ոչ ճերմակ ուկեհ բան- թալօնաւ և պիտո ֆոնսէ ժիլէս խախք պիտի ըլլային իրենց պարունակելոյն հետ :

Ու հաղիւ թէ մարդուն՝ չի խմած պիտա- յիս դրամը կը պատրաստուէի վճարել, մօտս նստող սուճուխճի ընտանիքէն մատամ մը ինչ մուտանէ կը հաւնիք :

— Իչտէ աս ամօթ բան է, որ սահաթ է չիւրիւմիւշ եղաւ իսկէրմիին վրան, պիտան ալ ճըռթկեցաւ, բարան տալ չուզէր կոր ֆուխարէին . . .

Գլուխս սանկ իրենց կողմը դարձուցի որ դեռ միւսիւ Օվրէստ ըսածնին՝ սեղանին տա- կը ծըռած իր սուճուխը կը ջարդէր . . .

Ահա սիրելի ընթերցողներս, Գատը-գիւղ ըստած տեղին զրօսավայրը եղող Մօտային մօտան իր միջուկովը :

Ձեզի խըրատս ըլլայ, հագուեցէք, չը- քուեցէք, և գացէք մօտա, և երբ բռնմ- նատէ յոգնելով տեղ մը նստիւ ուզէք, պա- րապ աթոռ գտնելուդ մի վստահիք, այլ նայեցէք որ սեղանին վրայ ալ թափուր ըլ- լայ, և մանաւանդ դիտեցէք և զգուշացէք որպէս զի մի գուցէ բէշին տակէն մեզի հա- նող ընտանիքներու մօտը իյնաք :

Ու երբ դաւադանս առած մեկնելու կը պատրաստուէի հոտկէ, նոյն այդ ընտանի- քին մէջ սա խօսակցութիւնը կանցնէր . . .

— Խըյանէթ, նայէ մենք կուգանք կը կենանք, դուք . . . բերի կըլմանիք . . .

— Ով ըսաւ, մենք ալ կ'ուգանք . . .

— Մենք չըմէնտըֆէռի խօլայութիւն ալ ունինք . . .

Հա՛ . . . հասկըցա՛յ . . . այսչափը բա- ւական էր փրկելու համար խեղճ Գատը- գիւղցիները, որոնց վրայ քիչ մնաց սխալ գաղափար կը կազմէի կոր :

Pardon, mes chères Kadi-Keuyottes !

Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՅՈՎՍԷՓ ԻԶՄԻՐԵԱՆԵՑ ԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի օր, Ղալաթիոյ Խորհրդարա- նին մեջ Տ. Մաղափա Ս. Պաշխարփին նախա- գահուքեամբ տեղի ունեցաւ Յովսէփ Իզմիր- եանց գրական յանձնաժողովին մեջանակա- բաշխութեան հանդէսը, որուն ներկայ գրե- նուեցան նաեւ բաց ի Յանձնաժողովին եւ Մասնախումբին անդամներէն, Նպիսկոպոս- ներ, Վարդապետներ, Քահանաներ, Կեդր. Վարչութեան անդամները, Հայ-Հռոմեական Վարդապետներէ շատեր եւ հայ ինտելիգեն- ճասակարգին պատկանող գրեթէ բոլոր անձ- նաւորութիւնները :

Կարգացուած տեղեկագրէն յայտնի եղաւ թէ Յանձնաժողովին այս օտի ներկայացուած գործերէն հետեւեալները գնահատուած եւ իբր յաջողագոյն գործ արժանի դատուած են մեջանակի :

1. Պոլիսի Հայեվարը, հեղինակ Թեոդիկ, Պոլիսէն, երեսունը հինգ ոսկի :

2. Գաւառաբարբառ, հեղինակ Տիգրան Չիքնեան, Վանէն, երեսունը հինգ ոսկի :

3. Գաւառաբարբառ, հեղինակ Օ. Բա- րադամեան Վանէն, երեսուն ոսկի :

4. Գաւառաբարբառ, հեղինակ Կարա- պետ Գաբրիէան, երեսուն ոսկի :

5. Բառարան, հեղինակ Սիւնն Գաբա- մանեան, երեսուն ոսկի :

Ինչպէս կը տեսնուի Պոլսահայ գրականու- քեան մեջ համբաւ ունեցող Թեոդիկի եւ Կարապետի աշխատութիւնը յաջողած է խել առաջին մեջանակը, որուն համար ջերմա- պէս կը շնորհաւորենք զինքը, ինչպէս շնոր- հաւորեցին բոլոր ներկայները հանդէսին :

Մեր համակրելի բարեկամին իր « Պոլսոյ Հայեվարը » ովը առաջին հանդիսանալը ան- գամ մը եւս կը շնորհէ թէ, ռամիկ լեզուն ալ իր գրական հովը ունի, որ մասամբ կը գործածուի իբրեւ օրուան լեզու ընթանելու յարկերու եւ թերթի մեջ :

Ուստի կարգ մը չարամիս գրուածքները որոնք ջրէլ ուզեցին իրենց « կը կարծենք թէ » ներով այս արդար աշխատութիւնը, անուշ պիտի սխալուին տեղի ալ բացարձակ առա- ջին մեջանակին առթիւ, որ չի բաւեցին կան- խապէս :

ԱԼՔՈԼԱԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Որպես զի Մեծայարգ Թաւաճման Էֆէնսիի կարեւորագոյն հարցը իր նպատակին ծառայէ, խմբագրութիւնս հարկ տեսաւ կարգ մը արժիւի գոհեռու դիմել եւ աղաչել ա. նոնց, որպէս զի իրենց սննդական փորձառութեամբ գրեմ այս նիւթին վրայ, յուսալով թէ՛ նոյն այս գրութեանց, կարգ մը օտար աղբիւրներէ փաղուած, եւ նիւթին հոգեբա. նական, փիլիսոփայական, գրագիտական ձեւերով գրուած յօդուածներէ շատ ու շատ աւելի ազդեցիկ պիտի ըլլան անոնք :

Մեծապատիւ զաղէթաճի էֆէնսի,
Իշկիճուլթանս վրայօքը կիտցածս կրելու
համար խաւրած թուղթ կիրդ առի : Իրաւ
քիմ թէօպէ ըրած եմ զըսըմը պերանս առ
նելը, ամա, քանի որ քիմ էօրինէք տէրի
կիտցածս ըսելս կուղէք կոր նէ, իշտէ աս
թուղթիս մէջը էնանէսիովը կրած եմ տէրճ
ըրէք թող կարդան :

Ծառադ, տրպատուէնս վէս խուսուր փա
խած, խուլումճիի քով աշկերտ եղած եմ
ասկէ քառուռն տարի առաջ, պէլքի հրա
մանքդ ան վախտը լուս արարէք տեսած
չէիր : Ես տրպատուէնը վարժապետին ֆալա
խանէն փախչիմ ըսելնիքէն, չարչիին եւ վար
պետին աղըզ տօլուսի քիւֆիւրներուն խափ
տըմիշ ըրի ինքըլինքս : Օլտուխճա իշկիւզար
տէլիխանլը մը ըլլալուս, վարպետս հետը կը
տանէր կը բերէր իս, չիւնքիւ տուններնիս
ալ մօտ էր :

Աս օրուան պէս միտքս է հիշ չեմ մօռ
նար, վարդեվարի տաղաւարին էր, չաքաթ
իրիկուն մը վարպետս կանուխ կոցեց, հաֆ
թալըխս ալ տուաւ ելաւ գնաց, ատ իրին
կունը նասըլ եղաւ չիյտեմ մէկ քանի առ
խատաշ իրար կուլիսէ հանեցինք քիտակ մէ
խանայ մը սըղընմիշ եղանք, ես օր ըսես
նէ ըռախին ահուայի ցաւի իլաճ կիտէի ան
վախտը : Նէ իսէ չերկնցունեմ ատ իրինկու
նը զըխըմին համը առի, էրթէսի օրը կէնէ,
ասանկ պաշլայեցի ամէն իրինկուն ուխտի
պէս մէխանան կլոխ դարնել : Հարս հասկը
ցաւ գործը, քանը չորս անգամ ծեծ կե
րայ, գիշեր մըն ալ իս դուրս ձգեցին, սօ
խախը միացի պէկճիին կուլիպան սըղընմիշ
եմ եղէր խապար չունիմ :

Տարիներ աննկուն ալ խօճաման տէլի
խանլը եղանք, մարըս իս կարգելու համար

ասոր անոր ինկաւ, անունս լսողը, խմանէմ
տէյի չէքի աղջիկ, չամաչըրին քիւֆէն պիլէ
էմիլէթ չըրին, ես ալ աս առաւելըլ ալթըխ
տիքլումալը ճիւնին մը եղած էի : Նէ իսէ էս
նաֆ ընտանիքէ մը աղջիկ մը կլոխս փաթ
թեցին, քի մէյէր անոր հարն ալ սոսկալի
սոյէն խման է եղեր : Ալթըխ անէր իլէ փե
սայ տէմ արմաց պաշլայեցինք ճնկել : Ան
վախտը հարուր օսկի նախըթ էրէյի ալ սէր
մայէ ունէի խանուլթիս մէջը : Մենք անե
րոջս հետ անտար իշկիճուլթան ինկանք քի,
գործը թէղկեաճը մոռցանք, խանուլթիս խալ
ֆան մէյէր ծարէն պունէր ծախեր է էլաթ
ներս, մալերս, ֆառլին չեմ, առտու մընալ
խանուլթ դացի քի թամ թախը . . . : Ինք
ղինքս խըռսէս տահա իշկիի տուի, գործս
ալ ձգեցի պաշլայեցի նախըթէս ուտել : Ատ
սըրանները դալուն մերինն ալ սէպէպլի էր,
նէիսէ տղաբերքի վախտը եկաւ, տահեկ մը
պերելու փարայ չէր միացէր ճէպս, դրա
ցինները հասան, չամաչիւր ճարեցին, եւ մէ
խանային թէղկեաճին վրան խապար պերին
քիմ մանչ մը եղաւ տէյի, միւթտէճիին պախ
չիշը, թէղկեաճտարը տուաւ, ալ կրնաս
հասկընար վիճակս : Տունին մէջը ինչ կայ
չիկայ ծախեցի, էշեա, լաթ, իսկէրմի, բիւ
թին վաղ անցայ, ֆախաթ, ըռախիէն չի
կրցայ անցնելու :

Ասանկ խեղճութեան մէջը օրժուած մը
նացի, կընիկս չամաչըրի կերթար, վաստա
կը էքմէքճիին տալու համար ծառքէն կառ
նէի մէխանաճիին հիսապը կը թէմուզցունէի,
չօճոխը օնիքիլէրի խաթրովը դպրոց դրինք,
կէրակուրը գէնկիններուն խըռնթըրովը կըլ
լար : Էռսունը չորս տարու եղած վախտս,
վախտուն տարուի պէս խամպուռս ելաւ կըռ
նակէս, տահա տէվամ կընէի ըռախիին :

Չերկնյուհեմ կիրս, տղաս դպրատոմէն հաթիմ պիթիմ ելաւ, օր մը զաւլալը հաւլ-րուս մէխանան եկաւ, ոտքերս ինկաւ քի, «Հայրիկ, ես գործ մը գտայ ամա, հարըդ խուման է կըսեն իս չեն առնեն կոր . . . ինծի մեղքըցիր, մարս մեղքըցիր» տէյի, ատ սահաթը Աստուած գիտես քի ծառքը սիրտիս դրաւ, չիչէն պոռնելուս պէս նետեցի, պերանս ցողունցի, տղուս գիրկը նետուեցայ, մէկտեղ դուրս ելանք մէխանայէն, նայիմ քի մարը արցունքը աչքին հոն կայ-ներ է, ամէնքս մէկ ժամ կացինք, ուխտ ըրի, կըլոխս պագի աղօթք ըրի, անկէ ծառ-քովս թիւճարին տարի դաւակս, հասկըցու-ցի գործը, տղաս հոն խաբուլանմիչ եղաւ:

Ան է աս է, աս օր փառք Աստուծոյ, տունի մը տէր եմ, կէչինմէս սըրալը է, տը-ղաս թիւճար եղած է, կռնակս բարձին ա-մէն բան կուտեմ կը խմեմ, Փախաթ ըռախի ըսուած զէհրի զէմպէրէկը տունէս ներս չի մտնար:

ԱՆԻՔԱՆ ՄՈՎՍԵՍԵԱՆ

Սիրելիս լրագրատէր էֆէնտի,

Պատուական լրագրորդ մէկ պոռնախը սղմեցնելու խըտար նամակ մը կողմդ կը խրկեմ կոր, աղաչելով որ անիկայ ինտոր քի գրած եմ նէ նոխտա մը չի հանելով կո-խես:

Տարիքս իծծունը հինգ, զէնահաթս մա-լիֆաթուրածի, մէկ մանչ երկու հասուկ աղ-ջըկան և տունի մընալ տէր եմ: Խում խա-բու կը նստիմ, ծնունդս Եէնի խաբու է:

Օգելից ըմպելի և չախընթըի համար մէկ երկու չաբաթ է զազէթաներուն մէջը բաներ մը կը գրուի կոր վազ անցընել տալու հա-մար, Փախաթ գիտցած եղիր քի, ալըչխան պերանը տայիմա կուզէ, հէմ ալ իշտար թուղթ մուրտէք նէ Փայտա մը չընէր, մէրմէրի վրայ ճուրը կաթելով կը մաշեցնէ, Փախաթ խմողին համար գրուածները հիչ թէէսիր չընէր, պոռնէ խօսքս:

Ես քառսուն տարուան ճիւնիւն մընեմ, հէմ ալ տիւզ կը խմեմ, իրիկունները հացէն առաջ աչքս չիչէն է, մարդու զարար չու-նիմ, քէսէէս պաշխա, բէք աշըրմիչ ընեմ նէ կը պառկիմ, իշտէ պու:

Հիմա ըսէ քի ինչու խման եղար տէյի: Հա', կայնէ որ պատմեմ:

Կէնճ վախտս չան զաւկին մէկը երբոր կարգուելու ելայ նէ, աղուոր աղջիկ մը ցուցուց, չիրքին քուրը կըլոխս հանեց, ալուճ մը փարայի կէօղ պոյաճութենով: Իշտէ ատ սահաթէն ինքզինքս խախուէս ը-ռախի տուի, հէմ ան վախթը ջուրսուղ կը նետէի: Տուներնուս մէջը խըռը պակաս չէր, իրիկունները ոտքս առաջ չէր երթար քի տուն երթայի, հէմ էրթալուս պէս թէփսիին կըլոխը կասնէի մինչև քի ինքզինքս խախու-ընեմ, անկէ ետքը պաճիկ:

Էքէյի վախթ ետքը, նայեցայ քի տունը խմելս ալ Փայտա չունի, մէխանան ախշամ-ճուլթեան ինկայ, գիշերները Չին Յին տուն կերթայի: Աստուած ինծի երկու աղջիկ և մանչ մը տուաւ, ասոնց դպրոցին, կըթու-թեանը հիչ չի խնայեցի, մեծցան, կարգուել-ցու եղան, մէկը հոռոմ մը առաւ փախաւ, մէկալն ալ հրեայի մը տղու հետ անխօսուկ-ճա կարդուեցաւ: Հէմ աղուորուլթենէն հէմ ալ խելքէն պակաս մարերնին քի իր տիխաթսըղուլթեանը սէպէպը ինծի ալ քաշել տուաւ, իս անանկ ըրաւ քի Ֆըչին մոնայի նէ խելքս կըլոխս չպիտի գար, իշտէ ալթըխ ինքզինքս տուի ու տուի, գործի ո՛վ կը նայի քի, պապամ տիւզ, ճանըմ տիւզ: Տղաս թիւճարի քով եաղըճի էր, ան ալ օր մը ելաւ չըլլալիք որքեւայրի մը հետ պը-սակուեցաւ . . . :

Էյ դուն եղիր իմ տեղս սիրելի լրագրա-պետս, աս կսկիծներուն տակէն ելլալու հա-մար չես խմեր . . . Իշտէ ես ալ սոսանկ ճիւնիւն մը եղայ, կը խմեմ քի սիրտիս ցա-ւը չիմանամ տէյի: Կընիկս կը փընտուեմ, էլ-լէմէ քէօմիւրի պէս գէմս կեղլայ աղտոտ կողոտ վրայ գըլթով, զաւակներս կը փընտ-ուեմ չիգայ, թէք կըլոխ մարդ մը, ինչ ընեմ դուն ըսէ: Աճաղա աս վիճակիս մէջը, Թաշանճեան էֆէնտին ինծի պիտի ամօթէ խմելուս համար, չէնէ մի խասըրը մընալ ինք հէտիյէ պիտի զրկէ տէֆի-զամ ըլլալու համար:

Հէմ սա ալ ըսեմ քի, ես կը խմեմ նէ կողտուկ կը խմեմ, մինակ իմ սիրտիս բասը առնել տալու համար:

Փախաթ սա ալ աղէկ գիտեմ քի, էկէր

ես վախտին խրման մը չըլլայի նէ, խելքս կըլիս գործիս խնայի նէ, զաւկըներս աս ճամբան չէին բռնէր, հախ ունիք, ամա ինչ ֆայտա, ինծի եղէր է ըլլալիքը, թող աս նամակս զաւկի տէր հարերը կարդան տէ քօրինէկ առնեն, զարար չունի, ես կենդանի մեռել եմ իշտէ, նոր պաշլայողներուն անկըծին օղ թող ըլլայ նամակս:

ՕՆՆԻԿ

Պատ. Խմբագիր «Հանրագիտակ» հանդէսին.

Կը զարմանաք անշուշտ, երբ նամակիս տակ պառկած ստորագրութեան վրայ վարժապետ անունը պառկած կը գտնէք ձեր առջեւ, նամակ մը, որ դպրոցական շարադրութիւն չէ, ոչ ալ ոլորմութեան խնդրագիր մը, այլ ալքովամոլութեան հարցը շոշափող անձնական փորձառութեանս մէկ մեղայագիրը:

Վարժապետ ըլլալովս հանդերձ խման մըն եմ այսօր, կը խըմեմ ոչ թէ խըմած ըլլալու համար, այլ մոռնալու համար իմ ներքին ցաւերս, որոնք ֆիզիքական կոտորուքներ չեն, ոչ ալ վէրքերու տանջանքներ, այլ հոգեկան, բարոյական ցաւեր, որոնք մեղմանալ չեն գիտեր, երևալուն տարիէ ի վեր, ամուսնացած ըլլալովս հանդերձ, ամուրիի խեղճ ու կրակ կեանք մը կ'անցնեմ այսօր, անշուք սենեակի մը մէջ թաղին աննշան մէկ փողոցին խիւրիկ տան մը վերնայարկը: Կնիկս ձգած եմ, տասը տարի կայ, և դաւակներս թիւով չորս, իրենց հայրը լքած հետեւած են իրենց մօրկանը, պահելով երեսներն և զղուելի անհատի մը պէս նայելով իրենց հայրիկին:

Վարժապետ մը խման կըլլայ միթէ...

Ձի խմեր տէ ինչ խալթ կուտէ (ներեցէք բացատրութեան ձեւիս):

Տուն կերթամ կնիկ չիկայ, զիրկս կը նայիմ զաւակ չիկայ, անպարը կը նայիմ հաց չիկայ, չէնկէլը կը նայիմ միս չիկայ, և ի վերայ այսր ամենայնի գրպանս կը նայիմ... ԴՐԱՄ չիկայ:

Իմ այս կրկնակ ցաւերս մոռցնող միակ և մի միակ բարեկամս և ամուրիս օղին է սիրելի խմագիրս, օղին, որ թմրութիւն կուտայ խմողին:

Վարժարանին մէջ կարգ մը նորեկուկ թեթեւ երիտասարդներ իբր Հոգաբարձու, երեսս ի վեր մէկ եղ մը ըսելնին կը մնայ:

Ամսագլխուն երբ թաղական աղաներուն կը դիմեմ, մուրացիլի մը պէս մէկ «ինայէթ օլա» մը ըսելնին կը պակսի երեսս ի վեր:

Ժամկոչ, տնտես, լուսարար, քահանայ, բոլորն ալ թթու դէմքով կը նային ինծի, իբր թէ քօլէռան բուն իսկ ես ինքս եղած ըլլամ:

Տղաքը, որոնք կաշակերտեն, ամէն տեսն դասարանին մէջ Տեսուչէն, Հոգաբարձութենէն լսած անախներուս ունկնդրելով բանի տեղ չեն դնել և ուղածնին կընեն հակառակ ջանքերուս:

Արդ խնդիրը իր այս իսկական վիճակին մէջ ինչ պէտք է ընել որպէս զի յաղթեմ այս բոլոր դժուարութիւններուն և ձախողուածներուն:

Համո՛նէ'...

Խմել... գինովեալ և մոռնալ անձն իւր, ուրիշ ճար չիկայ:

Բայց... Խմելով ինքզինքս մոռնալ ուղեւս զիս հիմնայատակ կործանեց, ինծի դէմ եղած բոլոր թշնամանքներուն յաղթել ուղեցի, զԱստուած դատաւոր կարգելով, բայց... չի փրկուեցայ, քանի որ խման անունը ամէն մարդ կը կարդար ճակատիս վրայ:

Թաղականը կը պոռար. — Ի՛նչ, ամսական տանք քի մէխանէծիրն տայ...

Հոգաբարձուն կ'աւելցնէր. — Ի՛նչ պահեր էք այս գինով վարժապետը, տղաք ալքովամոլութեան վարժեցնելու համար է:

Տեսայ, հաստատեցի թէ քակելիք ճամբայ չէր:

Այսօր երբ այս նամակը կը գրեմ, ձգած եմ օղին, և օղին ձգելովս ընտանիքս գրտած: Ձաւակներս մօտս են հիմա, թաղականները իրենց վճարումները կանոնաւորած, և հոգաբարձու միւսիւնները որոնք առաջ զիս կը չախէին, հիմա ես իրենց ճամբայ ցոյց կուտամ, իմ տարիներու փորձառութեամբս:

Այս նամակս խնդրեմ հրատարակեցէք, որպէս զի կարգ մը խման վարժապետներուն օրինակ ըլլայ և ինծի պէս իրենց վարկը, վարժապետ անունը բարձր բռնեն ու բռնել տան:

Վարժապետ

ԱՒԵՏԻՔ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

նազէթածի եւալրուս ,

Օքսէնս ըսաւ քիմ , « Հանրագիտակ » զազէթան խմաններուն պերնէն նամակներ կը ժողուէ կոր տէյի : Բէք ազէկ խելք էս ըրեր եւալրուս , չիւնքիւ աս խմելը բէք սիւլուրեա պան մը հղաւ ալթըխ , էս կնիկ հալուի էրիկմարդիքը խըւըլ խըւըլ քնացնելու խըտար խման մըն էի : էրիկս շարաթը երկու պինդիկ լեցունել կուտար , ֆիստանէս շաքխայէս կը կըյրէի ըռախիս չէի խնայէր : Ձաւակներուս մարութիւնը ողորմած հոգի մարս ըրած է , կերակուրս դրացինը կը հոգար , չամաչիրս քուրս կընէր , ես մինչօք իրինկուն չիչէին տիպն էի :

Տղուս կարդուելէն ետքը տունս հարս եկող աղջիկը խալուռ խալուռ կուգար դէմս , էրիկս թիւիլ թիւիլ կը դողար , չէքի նստած տուններնիս իմ վրաս տուցած էր տէյի , հապա իչկիլիխէս :

Ժամս եկեղեցիս մոռցած էի , տունին մէջը պառ պառ ծանս իլէն ըռախիին հոտէն պաշխտ պան չէրիգար : Օր մը ինսամիս ծեծեցի , օր մընալ տղուս վրայ հալաս ըրի , հարսս ծառքիս օյինճախն էր տիօր իրինկուն :

Կամաց կամաց իս ճանչցողները պաշխտ յեցին վլասուած բուրդ խուճաչի պէս քաշուիլ , սօխախ կեղլայի , բիճերը օւթալամիլ կընէին : Բիթիլի քիւթիլի հալ , կէօյիւսի պաղլամ , գլխու ցաւ , ծունդերս կը կարըրտէին , աչքերս չի տեսնալ պաշխտիցին էն սօնը , պուճախը ինկայ : Հէքիմները ծառք քաշեցին , մինչե քի հաթախ ինկայ նէ սանկ գնաց : Ժամը կնիկ մը քովս դրին , էթաֆս քովէս քաշուեցան , պատն երեսին մնացի :

Օր մը տաներէց տէրպապաս եկաւ , վըրաս կարդաց , ելաւ գնաց : Բովս մասային վրայ ըռախիի չիչէն դրուած էր , չիւնքի հէքիմը ըսաւ քի պիրտէն պիրէ մի կըյրէք տէյի , ճար ճարակ ըրի ելայ նստեցայ տէօչէկիս մէջը , ծառքս պառտախին տարի ըռախի է տէյի , զօրքին մեռնիմ , խաչանգիստի ճուր է հղէր , տիօր որ տիպը խմեցի , վրաս քուն մը եկաւ :

Իշտէ եւալրուս ան է աս է ատ եռմուռնախ գէնիլը պէրանս չեմ դնէր , իմ հրաշ-

քովս տունիններն ալ փրկուեցան , հիմա մեր տունը ըռախի ըսուած բանը չի մտնար , տըղաս դործին յաջողութիւն դտաւ , հարսս տան տիկին եղաւ , ես ալ մար եղայ քէօչէն անցայ :


Իշտէ աս դիրս թող աշխըրքին չորս քէօչէն կարդան հասկնան , գէրէ կը տեսնամ կոր քի , կնիկ խմաններն ալ օր օրի կը շատնան կոր բիացան :

ԻՍԽՈՒՂԻ

Վերոգրեալ նամակները , ոչոնք զատ զատ մէկ մէկ անհատի ալքողամոլի կեանքը կը պատկերացնեն , իրենց մէջ ակն յայտնի ցոյց կուտան թէ , մարդ մը ինչպէս և ինչ պարագայներու տակ ինքզինքը կուտայ այդ զաղիր ունակութեան որ հետզհետէ ախտ մը կը դառնայ : Այս նամակները սա առաւելութիւնն ալ ունին թէ՛ խմողը ինքն իր բերնով խոստովանելով հանդերձ իր մոլութիւնը , անկէ պաղած և լքած ըլլալն ալ կը մասնանշէ :

Գրուածք մը ինչ ձևի տակ ալ ըլլայ , պէտք է շինիլ և հրապուրիլ հանդամանք մը ունենայ : Արդ , աւելի լաւ չէ փոխանակ օտար էջերէ սիւնակներ թարգմանելու և կլկեցնելու ժողովրդեան , բուն իսկ անձերը խոսեցնել իրենց տարիներու փորձ լեզուաւ :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԸՆՏԱՆԵԿԱՆ ԺԱՄԱՆՑ
ՍԿԻՒՏԱՐ ԻՃԱՏԻԷ ՍԵԹԼԻ ՔԱՋԻՆՕ

ՆՈՐԱՅՆԱՐ ՖԱՆԹՕՇՆԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԻ

ՅՈՎՍԷՓ ՍԸՎԱՃԵԱՆ ԷՖԵՆՏԻ

Ծանօթ զբօսարանատէր Միհրան էֆէնտի կը խնդրէ մենէ ծանուցանել Սկիւտարի արդայ հասարակութեան թէ՛ Շաբաթ և Կիրակի գիշերները հոշակաւոր Փանթօշներու հեղինակ Յովսէփ Էֆէնտի Սըվաճեան ներկայացումներ պիտի տայ զբօսարանին պարտէզին մէջ :

Ընտանեկան մաքուր և զբօսեցուցիչ ժամանց մը փնտռողները կրնան փտահաբար դիմել , Գիշերը համեստ և դիւրամատչելի , տղայոց կէս տոմսակ :

ՀՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Գրականութեան դաշտին մէջ յուրի ,
Ուր գործերն յաճախ դըրուին անուրդի ,
Իւ անգուգական գրչոյն հայելար ,
Նոր գրողներու կարծես ղեկավար ,
Մեծահամբաւ Տիար ազնիւ Թեոդիկ ,
Իւ ին ֆայասուկ ֆայլերով տոսիկ ,
Հինգեաբքի օրուան այն սասիկ տալուն ,
Տոյլ տրուալ ցոյր տաղանդին տալուն ,
Երեսունընիւց տակիներ դէղին
Կորգելով , — զումար մ'որ իւ կանթեղին
Սպառած կազին չէր համեմատեր —
Փառք տրուալ բարձրեալն առ Աստուած, առ Տէր
Եւ Ի վերեանցի անդամք ալ գիտուն ,
Շնորհաւորել փութացին ժպտուն
« Պոլսոյ հայելար » չըմաղ իրեն ,
Որուն համար , ո՛հ , սիրով նուիրեն ,
Աղա Յովսէփի բողած կրտսակին
Համեմատ զումարն այս խիտ քանկազին :
Մենք ալ որ յաճախ վայելած ենք իւ
Աշխատակցութեան բաժինն համակիր
Կը փութանք յայտնել , գրչով գեղեցիկ !
Շնորհաւորութեան բառեր անկեղծիկ
Հոգ չէ քե ոմանք առ ի նախաձեռն
Յօդուածներու մէջ , բուրդ սիրացու
Ջանացին տուէր ամէլ վաղանցով
Իբր արդիւնք մըսաց տրուալ կամ անձուկ :

Էստեան Երբեղ զըրպոցին մեջ ուր ,
Վարժունիներ կան մեծ եւ կամ չուշուր ,
Որոնք իրենց նուրբ մըսաց պաշարեն ,
Խրոխացած զմեզ յանախ պաշարեն ,
Ու համայնագիտ ցոյց տալով զիրենց ,
Կ'սպասեն որ , ո՛հ , յարգենք կամ սիրենք ,
Այս առտու կանուխ , արեւածագին
Սարեցաւ հանդես մը ոչ-քաղծագին
Եւ վարժարանին սանունք ալ բոլոր
Իրենց քայլերով փութկոտ , անմոլոր ,
Ի վարձ իրենց յար քափած գեջ ֆրսանց
Ստացան նուէր մէյմէկ համով . . . տանձ
Եւ յոյժ սիգապանձ փութալով յատեան
Ընկալան մէյմէկ ոսկեգոծ մատեան :



ᠪᠠᠭᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨᠠᠨ

Վերջալոյսին բոցել ծոցին մէջն անհուն ,
Վառ ամպերու ծիրան շերտեր քրքուուն ,
Երբ լամբօրէն գալարուելով քեւածեն ,
Կը հմայուլիմ . . . :

Անցառին կոյս նահապետներ զոգեմ խոր ,
Մոխակի մը դալլալիկները հեօօրօր ,
Խորհրդաւոր յոյզեր եբբօր ինձ բերեմ ,
Կ'գգլխիմ . . . :

Աղամանդեայ կաթիլ մը ցող փափկույուն ,
Երբ դողդըղայ բնուս ծաղկանց վերքերուն
Մեջ , արեւին վառ ցոլերուն թակ լինն ,
Կը դիւթուին . . . :

Ու գիւերին տարամուտեան մեջն լուռ ,
Երբ կը լրսեմ ջուրակի մը հեռալուր ,
Զայնեմ՝ որոնք կը հեծեծեն մեզն օդին ,
Կը յուզուիմ . . . :

Բայց երբոր փու աղու ձայնիդ տեսագիւն ,
 Ելեւեջներն քրթալով ինձ հասնին ,
 Ուր հասնումի ճիւղանդ շեշտեր կը մըխան ,
 Ես կուլամ . . . :

ՀՐ. 3. ՄՈՄՃԵԱՆ

ሀሁኒ ፆኮሆ ሆኮ ሰሁቶ

ԱՌԱՆՅ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ

“**ՀԷՐՃԱՅԻ**” ԿԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԴՈՆՅՈՒՄՆԵՐԻ ՎՈՂՈՅ ԹԻՒ 13

Ուր պիտի գտնէք ամէն տեսակ հագուստի, ներմակեղենի, ֆանքզիի, ազամանդի, ժամացոյցներու, շրթախերու և ամէն տեսակ կարասիներու հոս միջերը մը :

ԵՒ ԳԻՏԷՔ Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆԱԻ

Ա Պ Ա Ռ Ի Կ


Գնաժ ապրանքնուդ 0/0 20ը կանխիկ,
մնացեալը չաբաթական 0/0 5 շրջ լճարեւով:
կանխիկ գնողին 0/0 5 շեղչ:

Հէրճայի վաճառատուներ կը փութայ ծա-
նոցանել իր բաղմաթիւ յաճախորդներուն
թէ՝ մօտ աստեղէն պիտի աւելցնէ տեսակը իր
ապրանքներուն , զորս պիտի հրատարակենք
յաջորդիւ :

ԼՈՒԻՃԱՔՕԼԻՕ

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ



Ափրիկէի մէջ բացարձակապէս անկարելի բան մըն է այցելել Եգիպտոսը երկիրը, առանց ցեղապետին հաւանութիւնը առնելու:

Այսպէս, Չատէէն ուր կը գտնուէինք, Եգիպտոսը գլխաւոր՝ Օպա-Օղուէի զրկեցինք պաշտօնեայ մը, ուղերձով մը, որով արտօնութիւն կը խնդրէինք երթալ իրեն մատուցանել մեր մեծարանքները:

Բանի մը օր ետք հրաման ստացանք երթալու Կեդրոնը՝ Հօտէ-Եգիպտոս: Կեանքերուն մէջ բնաւ ճերմակ մարդ տեսած չըլլալով չատ փափաքեցան մեզ տեսնել, և իրենց տեղումն մէջ չատ լաւ հիւրասիրութիւն մը պիտի ընծայէին մեզ:

Գիւղապետը Օպի-Չատէ, որ իր երկտասարդութեանը ապրած էր Եգիպտոսը մօտ, և կը ճանչնար այդ ցեղապետին նկարագիրը, յանձնարարեց կարելի եղածին չափ շուտ երթալ:

— Հաւանական է որ, ըսաւ, մեզի վար դնէ ան, որովհետեւ Ափրիկէի ամբողջ ներսերը ճերմակները իր բարձրարժէք մարդիկ կը նկատուին, և հաճոյք պիտի զգայ մեզ իր մօտը ունենալով: Մեզի շնորհներով և նուէրներով պիտի ողորդէ միայն վախճալիք մէկ բան կայ...

— Ի՞նչ...

— Սա թէ չատ գոհ մնալով գուցէ այլ ևս թող չտայ ձեզի:

— Այդ ըսածդ կ'ստիպէ մեզի որ խորհինք մեր այս ձեռնարկին վրայ:

— Խորհելու հարկ չկայ: Կա'մ պէտք է եկածնուդ պէս դառնաք Պէնէն, և կամ հնազանդիլ Օպա-Օղուէի, և երկուքէն մէկը միայն կրնաք ընել՝ հնազանդիլ:

— Բայց երբ նախապատուենք Յօրմօղա դառնալ...

— Այն ատեն ստիպուած պիտի ըլլամ ձեզի արգելելու:

— Դո՛ւն.

— Այո: Չէք ճանչնար Եգիպտոսը ցեղապետը: Հիմա որ ան հրամայած է իր մօտը երթալ, ինծի պատասխանատու պիտի նկատէ ձեր անհնազանդութեան, և իր մարդերէն մէկը պիտի զրկէ զլուստ տեղէն թոցնելու համար:

— Կուզէի գիտնալ թէ ի՞նչպէս պիտի արգելիս Չատէէն մեր մեկնումը: Չէք գիտեր ուրեմն թէ մեր Պէնէնցի 15 պատեւազմիկներուն և կատարելագործեալ զէնքերուն շնորհիւ պիտի կրնանք փախցնել քու դիւղիդ բոլոր բնակիչները:

— Աղէ՛կ, բայց դարձեալ պիտի կուռիմ, և այսպէս միայն կրնամ զերծ մնալ Օպայի բարկութենէն:

— Օն անդր, վախ մի՛ ունենար բնաւ, պատասխանեցի դիւղապետին, ձեզի այս ծայրայեղութեան չպիտի մղենք: Մինչև հոս չեկանք որպէս զի ետ երթանք, և եթէ Օպա-Օղուէ ուղէ վճար դնել մեզի, այն ատեն մենք պիտի մեկնինք դարձեալ:

Գիւղապետը հիացաւ մեր որոշման վրայ: Այս խեղճ մարդը իր ցեղապետին բարկութենէն զերծ մնալու համար փորձած էր ընդդիմանալ մեր վերադարձին, և երբ այսպէս մեր հաւանութիւնը առաւ, աչքերը ուրախ ցոլք մը արտայայտեցին:

Հետեւեալ առտուն իսկ Ֆէքուէ անուն ռահվիրայ սուրհանդակի մը առաջնորդութեամբ ճամբայ ելանք դէպի Հօտէ-Եգիպտոս: Մինակ սուրհանդակ մը կրնար 5-6 օրէն հասնիլ Կեդրոն, բայց մեր կարաւանը, առանց ճամբան հոս հոն զբօսնելու, հազիւ կրնար 10-15 օրէն հասնիլ:

Երբեք չպիտի մոռնամ այն վայրենի և պերճաշուք տեսարանը, որոնք կը պարզուէին այս տեղերէն մեր անցած ատեն, ոչ ալ որսորդի յուզումները, որոնք կ'արթննային մեր մէջ ամբերկեան մեծ եղջերուի մը

և ծանօթ երէններու ներկայութեան, առանց խօսելու վայրի անհամար կենդանիները, որոնք կը վխտան Նէպուլի մթաստուեր և անսահման անտառներուն մէջ :

Իրիկուն մը, յոգնաբեկ ինկանք նոյն օրուան համար որոշուած իջեւանը : Ռահվիրա Ֆէքուէ ինքն ալ իր որսորդի մեծ աղեղը կը գործածէր թեթեւցնելու համար իր ընթացքը որ երկար էր, կտրած անցած էինք անտառներու և սեղուտներու ընդարձակ տարածութիւն մը և հանդիսար սնունդէն աւելի ծանրութեամբ իր պէտքը կը չեղէր : Գիշերը կ'իջնէր և ստուերները որոնք կը պսակէին և կը սեւածէին մեծ արմաւենիքներու և պանանիներու կատարները, մեղի կը ծանուցանէին թէ վտանգաւոր էր աւելի դանդաղեցնել մեր ընթացքը, սակայն առաջնորդողին խօսքին նայելով, դեռ քառորդ ժամ մը ունէինք հասնելու այն բացատանը ուր պիտի իջեւանէինք :

Յանկարծ Ռահվիրա Ֆէքուէ որ Լուսիուսի և ինծի հետ կարաւանին առջեւէն կ'երթար, չարժուժով մը մեղի կեցուց, գոչելով

— Մտի՛կ ըրէք . . .

Ականջնիս սրեցինք : Անտառին անորոշ բիւր աղմուկներուն մէջէն հեռաւոր ճիչեր միայն կը լսէի շնաքայլերու, որոնք իրենց որջին մեկնած էին ի խնդիր որսի Բայց չընաքայլը այնքան սովորական կենդանի մըն է կեդրոնական Ափրիկէի մէջ որ մեր ընկերակիցը չպիտի սոսկար, իր զգայարանքները բնական է թէ մերիններէն աւելի վարժ, պէտք է լսած ըլլային տարօրինակ աղմուկ մը շոր մենք չէինք առնել ցարդ : Ծայրայեղ ուշադրութեան քանի մը վայրկեանէ ետք, ուր իր դէմքին վրայ զարմանքի խառնուած անձկութիւն մը կը կարդացուէր, վերջապէս խօսեցաւ : Արդ գիւղապետին կողմէ մեզի ընկերացող Ուրանօ՝ ալ կը մասնակցէր առաջնորդողին վրդովմունքին :

— Մեր առջեւը շատ մը վայրի փիղեր կան, ըսաւ, ամբողջ քրապ մը անշուշտ :

« Բրաալ » բառը կը նշանակէ գիւղ, կամ աւելի ընդարձակելով ցեղ :

— Ինչե՛ն կը հետեւցնես այս կենդանիներուն ներկայութիւնը, հարցուցի :

— Իրենց ճիչերը կը լսեմ : Կամաց կա-

մաց քալենք իրենց ուշադրութիւնը չարթնցնելու համար :

Ուրանօ, հաւանութեան չարժուժ մը ըրաւ : Լուսիուս և ես բան մը չէինք լսել, բայց ամէն այսօրինակ յանձնարարութիւն շատ կարեւորութիւն ունի կոյս անտառի մը մէջ : Փութացուցինք մեր քայլերը շուշեփս բռնած :

Քեքուէ իրաւունք ունի Բանի մը վայրկեան ետք իր յիշատակած ձայները կը հասնէին մեզի, այնքան որոշ որ կրնայինք ճշգրտել փիղերու ըլլալը :

Մեր առաջնորդը կասկածոտ կը դառնար :

— Այս անտառներուն մէջ բանակուողին չէ որ պիտի հանդիպինք, ըսաւ ցած ձայնով, նայեցէ՛ք . . .

Լայնարձակ բացաստանի մը եղերքը հասնք : Ամէն կողմ փիղի ժանիքներ և ոսկորներ տեղ տեղ խմբուած էին, որոնք կիսովի ծածկուած խտերէն, ոմանք դեռ իրենց վրայ ունէին չորցած միսերու կտորուանքներ : Գարշիլի հոտ մը որ երկու հոտած մեծ մարմիններէն կուգար, ընկրկեցուց մեզ :

— Ի՛նչ է աս տեղը, հարցուցի առաջնորդիս :

— Փիղերու գերեզմանատուն մըն է, պատասխանեց ան, խորհրդաւոր երեւոյթով մը և իր ձայնին տալով եզակի շեշտ մը : Մտի՛կ ըրէ, աղաղակները կը կրկնուին, փիղերը յուղարկաւորութիւն կը կատարեն և գուցէ իրենցմէ մէկը կ'առաջնորդեն գերեզմանատուն :

Ճիչեր չէին որ կը լսէինք, այլ աղերսարկու և երկարաձիգ կաղկանձիւններ, որոնք անհաւասար ժամանակամիջոցներով կը ցնցէին անտառին կամարները :

(Շարունակելի)

Արտագրութիւն ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՍԱՆ

Տպագրութիւն — ՃԻՉԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի հասէտի քիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԵՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբ Զատնի, Թոփաքեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանապ տո-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ծանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց թէյըն/ններու և
տղայոց չիք և գիմացկուն ֆաբրիկաներու
ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ
չերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

աակՍրկո լթիւն չկայ, թիւը 2 զըշ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

43—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն եղներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, մլուկ-
ները կը ջնջեն ևն. ևն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ .

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց գիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րայ առնել ամէն գործ, թէ ներկն և
թէ գործաւորողիքը մէջն ըլլալով .

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պագըը-
ճըլար թիւ 26, Գ. Աճեմեան . — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
դիւրամատչելի պայմաններով .

8—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պանդեֆափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10



ԱՆՏԵԼԻՊ
ՎԱԺԱՌԱՏՈՒՆ
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՑ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԻՌԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի եւ Գլաններու Կրամֆոնի
եւ երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
սեղի Պանդե Դաբու, Հաճի Պեքիբ
Էֆենտի կից, Նալտեզ խանի տակ
քիւ 2: Մասնաձուլ Պանդե Դաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: